ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

19/09/2024թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԿՖԿՏՀ)» ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «09» 04 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և 19/09/2024թ. կնքված N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), 7.5 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4.1-րդ կետի «60,336.000 ՀՀ դրամ, 30,168,000 ՀՀ դրամ, 60,336,000 ՀՀ դրամ, 90,504,000 ՀՀ դրամ և 355,982,400 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «37,332,900 ՀՀ դրամ, 18,666,450 ՀՀ դրամ, 55,999,350 ՀՀ դրամ, 37,332,900 ՀՀ դրամ և 447,994,800 ՀՀ դրամ» բառերով:

1.2. Պայմանագրի Հավելված N 1-ի 2-րդ աղյուսակը փոխարինել ստորև բերված աղյուսակով.

Ծառայության իրականացումն ըստ առաջադրանքների	Մասնակցի կողմից առաջարկված գինը ըստ առաջադրանքների	Վճարումները ըստ %	Վճարման ենթակա գումար
Առաջադրանք 1	37,332,900.00	5.00%	29,866,320.00
Առաջադրանք 2	18,666,450.00	2.50%	14,933,160.00
Առաջադրանք 3	55,999,350.00	7.50%	44,799,480.00
Առաջադրանք 4	37,332,900.00	5.00%	29,866,320.00
Առաջադրանք 5	447,994,800.00	60.00%	358,395,840.00
Վերջնական վճար		20.00%	119,465,280.00
Ընդամենը՝	597,326,400		597,326,400

2.Այլ պայմաններ

2.1. 19/09/2024թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3» ծածկագրով պետության կարիքների համար «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011054260
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

_____Ա. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի
Պլազա բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02529689
Հ/Հ 1510000944344363
Արարատբանկ ԲԲԸ
Տնօրեն՝

_____Ի. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.